



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

1 փետրվարի 2020թ. թիվ 89

**Ա. ԳՈՒԼԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ս. ԱՍՐՅԱՆԻՆ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի պարտականությունները կատարողի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Գուլանյանին, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Սվետլանա Ասրյանին ս/թ փետրվարի 3-ին մեկ օրով գործուղել Շիրակամուտ՝ խնամատար ընտանիքներում հոգեզավակների խնամքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհաձախսի:

**ՀՀ ԼՈՌԻԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. փետրվարի 1
ք.Վանաձոր